

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան

01 մարտ 2012 թ. N 9

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 9

ԲԱՆԿԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԲԱՆԿԱՅԻՆ ՈՍԿՈՒ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն արժույթային արժեքներ համարվող գույքի տեսակներն են՝ ՀՀ արժույթը (ՀՀ դրամը), ՀՀ արժույթով արտահայտված վճարային արժեթղթերը, օտարերկրյա արժույթը (արտարժույթը), արտարժույթով արտահայտված վճարային արժեթղթերը, բանկային ոսկին և նշված արժույթային արժեքներից բխող իրավունքներն ու պարտավորությունները (որոնք ունեն փողային արտահայտություն):

Օտարերկրյա արժույթն (արտարժույթն) է՝ օտարերկրյա մեկ կամ մի քանի պետությունների տարածքում շրջանառության մեջ գտնվող (նաև շրջանառությունից հանված կամ հանվող, բայց փոխանակման ենթակա օրինական վճարամիջոց հանդիսացող) թղթադրամներն ու մետաղադրամները, բանկային հաշիվներում և ավանդներում գտնվող օտարերկրյա պետությունների դրամական միավորներով և (կամ) միջազգային դրամական միավորներով արտահայտված միջոցները: Բանկային ոսկին՝ Լոնդոնի թանկարժեք մետաղների շուկայի ասոցիացիայի անդամ հանդիսացող գտարկող (աֆինաժային) կազմակերպություններում արտադրված, ոսկու ձուլակտորներն են, որոնք ունեն անհատական սերտիֆիկատ և որոնց վրա դաջված է գտարկող կազմակերպության անվանիշը, քաշը, հարգը և հերթական սերիական համարը: Ոսկու բանկային ձուլակտորների քաշը կազմում է 350-ից 450 տրոյական ունցիա (10886-13996 գր.), 99.5⁰ -ից ոչ պակաս ոսկու պարունակությամբ և իրենց վրա լրացուցիչ դաջված է արտադրության տարեթիվը:

2. «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն *թանկարժեք մետաղներն են՝* թանկարժեք մետաղներից պատրաստված իր չհանդիսացող ոսկին, արծաթը, պլատինը և պլատինային խմբի մետաղները (պալադիում, իրիդիում, ռոդիում, ռուտենիում և օսմիում)՝ ցանկացած տեսքով և վիճակում (բնակտոր, գտարկված, ձուլակտոր, հումք, համաձուլվածք, նախապատրաստվածքներ, կիսաֆաբրիկատ, քիմիական միացություն, մետաղադրամ, ջարդոն, թափոն և այլն): *Թանկարժեք քարերն են՝* բնական, անմշակ և մշակված՝ ավաստը, գմբուխտը, սուտակը, շափուղան, ալեքսանդրիտը և բնական մարգարիտը: *Թանկարժեք մետաղներից պատրաստված իրը՝* թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք և գունավոր մետաղների համաձուլվածքներից նպատակային նշանակության և օգտագործման համար պատրաստված պատրաստի արտադրանքն է, որն իր վրա կարող է ունենալ նաև ոչ թանկարժեք մետաղներից այլ բաղադրատարրեր:

Զտարկված թանկարժեք մետաղներն են՝ գտարկող կազմակերպությունների կողմից արտադրված ՀՀ կամ միջազգային ստանդարտներին համապատասխան՝ թանկարժեք մետաղների ցանկացած չափի ձուլակտորները, մանրագնդիկները, փոշին, որոնք պետք է ունենան հիմնական թանկարժեք մետաղի 99.5⁰ -ից ոչ պակաս պարունակություն: *Բանկային ոսկին՝* «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով

սահմանված ոսկի: *Մտանդարտացված ձուլակտորներն են`* ցանկացած չափի և «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքով նախատեսված հարգերին համապատասխանող թանկարժեք մետաղից պատրաստված ձուլակտորները, որոնք արտադրվել են գտարկող կազմակերպությունում:

Հարգը` չափանիշ է, որը ցույց է տալիս թանկարժեք մետաղների կշռային պարունակության չափը համաձուլվածքի 1000 կշռային միավորի մեջ: *Տրոյական ունցիան`* թանկարժեք մետաղների զանգվածի չափման միավոր է, որը հավասար է 31.1034807 գրամի:

3. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 08.02.2011թ. «Առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և վարման կարգը հաստատելու մասին» N 25-Ն որոշմամբ հաստատված «Առարկայագուրկ մետաղական հաշիվների բացման և վարման» կարգում օգտագործվող «բանկային ոսկի» և «ոսկու ստանդարտացված ձուլակտոր» հասկացությունները կիրառվում են համապատասխանաբար «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» և «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքներով սահմանված նշանակությամբ: Մետաղական հաշիվներում հաշվառվող անկանխիկ ոսկու հաշվառումն իրականացվում է ՀՀ դրամով` ՀՀ կենտրոնական բանկի կողմից ոսկու համար հայտարարած հաշվարկային գնով և կշռային արտահայտությամբ` արտահայտված գրամներով (0.01 գրամ ճշտությամբ) կամ տրոյական ունցիաներով (0.001 տրոյական ունցիա ճշտությամբ):

Բանկերն ամեն օր *վերագնահատում են* մետաղական հաշիվներում (այդ թվում` տվյալ բանկի կողմից այլ բանկում բացված մետաղական հաշիվներում) առկա մնացորդային ոսկին` տվյալ օրվա համար ոսկու համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարած հաշվարկային գնով: Բանկում բացված մետաղական հաշիվներում առկա մնացորդային ոսկու վերագնահատման տարբերությունները հարկման նպատակով չեն ներառվում տվյալ բանկի և այդ հաշիվները տնօրինող կազմակերպությունների (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ) և ֆիզիկական անձանց (այդ թվում` անհատ ձեռնարկատերերի) եկամուտների և (կամ) ծախսերի մեջ (ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 17.05.2011թ. «Բանկերում բացված առարկայագուրկ մետաղական հաշիվներից եկամուտների ճանաչման և այդ եկամուտների հարկման վերաբերյալ» N 22 պաշտոնական պարզաբանում):

4. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետի, 8-րդ հոդվածի և 11-րդ հոդվածի «դ» ենթակետի համաձայն հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման) արժեքով (բացառությամբ` օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների), իսկ արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների վերագնահատման արդյունքները օրենքի իմաստով եկամուտ կամ ծախս չեն համարվում:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

Բանկերի ակտիվներում հաշվառվող բանկային ոսկու և թանկարժեք մետաղների վերագնահատման արդյունքները (տարբերությունները) հարկման նպատակով չեն ներառվում տվյալ բանկի եկամուտների և (կամ) ծախսերի մեջ: